

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳԻՐԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի է, կես տարվան 6 ռուբլի:
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлис, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է Լ Է Փ Օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերից):

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լիցզով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպեկ:
Տ է Լ Է Փ Օ Ն № 253.

Բ Ա Ց Վ Ա Ն Ե Բ Ա Ց Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ն

ՆԵՐԿԱՅ 1900 ԹԻՍՎԱՆԻ

ՄՇԱԿ

(28-րդ ՏԱՐԻ)

ԻՐԱՎԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԴՐԻ

«ՄՇԱԿԸ» ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ՆՈՅՆ ՊՐՕԳՐԱՄՈՎ ԵՒ ՆՈՅՆ ՈՒՂՂՈՒԹԱՄԲ

ԲԱՑԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մ շ ա կ ե» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն եւ մէկ եւ տասն
ամսականը՝ 9 ռ., ինն եւ ութ ամսականը՝ 8 ռ., եօթ ամսականը՝ 7 ռ., վեց ամսականը՝ 6 ռ., հինգ
ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ. եւ մի
ամսականը՝ 1 ռուբլի:

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱՑԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ա մ ե Ր ի կ ա յ ի բաժանորդները պէտք է
վճարեն տարեկան 6 դոլլար. եւ ր օ պ ա յ ի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պ ա Ր ս կ ա ս տ ա յ ի
բաժանորդները 10 ռուբլի:

«ՄՇԱԿԻՆ» գրվել կարելի է ԽՐԱՎԱՐԱՍԱՆԸ (Բաղրանայա եւ Բարձրակայա փողոցների
անկիւնը):

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար, եւ առհասարակ նամակ-
ներ եւ ծրարներ ուղարկելիս, պէտք է գրել հետեւեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция
«МШАКЪ», իսկ արտասահմանից՝ ТИФЛИС, Rédaction du journal arménien «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լիցզուներով:

Ա Պ Ա Ռ Ի Կ Բ Ա Ց Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ն Զ Է Ը Ն Դ Ո Ւ Ն Վ Ո Ւ Մ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Բոլորովին սուտ են եւ անհիմն. — ՆԵՐԳԻՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Գլխավոր մասնաժողով-
ընդհանուր. Երկրաչափից յետոյ Ախալքալաքի
գիւղերում. Թատրոն. Երկրաչափից շրջափակ-
ների օգտին. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵ-
ՍՈՒԹԻՒՆ. Նամակ Գերմանիայից. — ՀՆՈՒ-
ԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԲՈՒՐՈՎԻՆ ՍՈՒՏ ԵՆ ԵՒ ԱՆՀԻՄՆ

Մեր ընթերցողներին յայտնի է, որ մի
քանի ամիս արանից առաջ ժողովրդի մէջ
վրդովիչ անասակներ էին տարածված
մեր երկրաչափի մասին: Նոյն իսկ նշա-
նակված էր այն օրը, երբ պէտք է մի ինչ
որ ընդհարում պատահեր մեր երկրաչափի
և մի ուրիշ միջնորդային մարմնի հետ:
Թէև բանիմաց և հասկացող մարդիկ ա-
մեն կերպ հերքում էին այդ յուզող լու-
րերը, բայց անպաշտօնեան ոգին զբո-
նում էր ազդարանակութեան մասայի մէջ
շատերին, որոնք շարունակում էին վա-
խեցնել ժողովրդին երևակայական վտանգ-
ներով:

Կա շատ տխուր և շատ ցաւալի
մի երեւոյթ էր, որ ցոյց էր տալիս թէ
անհասկացողութիւնը դեռ խոր արմատներ
ունի ժողովրդական մասայի մէջ: Անցաւ
նշանակված օրը առանց որ և է եղելու-
թեան, ոչ մի բան փոխութեան չեն-
թարկեց և ժողովուրդը տեսաւ, որ պտը-
տող լուրերը սուտ էին: Կարելի էր են-
թադրել, որ դա մի գեղեցիկ և համոզե-
ցուցիչ դաս էր ազդարանակութեան հա-
մար, որպէս զի նա այլ եւս մոլորութիւն-
ների մէջ չընկնի և ամեն մի հնարած
լուրի վրա ուշադրութիւն չը դարձնի:
Բայց զիտողութիւնները ցոյց են տալիս,
որ անհասկացողութիւնը դեռ կարող է նոր
հունձեր ունենալ ժողովրդի մէջ և երևի
երկար ժամանակ:

Երկրաչափի աղէտը առաջ է բերել
դարձեալ սուտ, անհիմն զուշակու-
թիւններ, որոնք ոչ մի գիտական հիմք
ունեն և ճշմարտութեան ոչ մի նշոյլ չեն
պարունակում իրանց մէջ: Զարմալիս և
անհասկացող մարդիկ տարածում են վրդո-
վեցող լուրեր, որոնք օրբան էլ իմար և
անհասկացողական լինեն՝ դարձեալ արձա-
գանք են դնում թոյլ ուղեղների և զբո-
ղաված ջրերի մէջ:

Կրկնում ենք, որ այդ և զբանց նման
լուրերը բոլորովին սուտ են և կատարե-
լապէս անհիմն: Եւ թող ժողովրդի մէջ
պատող բանիմաց մարդիկ հասկացնեն նը-

ինչ դժբաղդութիւն են նրանք բերում եւ ին-
քը, լրագրեր, բացատրում է Ախալքալաքի ա-
ղէտի էութիւնը, որ բաւական է հետաւոր
մարդկանց արդին շատ եւ շատ բան ասելու:

Այդ դժբաղդութիւնը — առում է նա — առա-
ւելագոյն սարսափելի է այն պատճառով, որ
նրան նախատեսել, հեռացնել չէ կարելի: Ժո-
ղովրդական ամեն մի ուրիշ փորձանք, օրի-
նակ, համաձայնակ հիւանդութիւնը, սովը
սկսվում եւ զարգանում է աստիճանաբար.
երեւում են նշաններ, որոնք ցոյց են տա-
լիս թէ մօտ է դժբաղդութիւնը. նրա դէմ
կարելի է կռուել: Նրա առաջը կարելի է առ-
նել, վերջապէս, եթէ ձար չը լինի, նրան
կարելի է ընտելանալ: Բայց երկրաչափը կռե-
լու հնարաւորութիւն չէ տալիս. նա սար-
սափելի է այն պատճառով, որ զայն է յան-
կարժ եւ կայծակի պէս է խփում: Ծաղկած
գիւղերը մի անթաքնութեամբ թաղվում են հո-
ղի տակ, մի անթաքնութեամբ փլուզւում է ամ-
բողջ մի երկրի անտեսական բարեկեցու-
թիւնը, որ երկար տարիների ընթացքում էր
ստեղծված, հարիւրաւոր մարդկային կեան-
քի են ոչնչանում եւ կենդանի մնացածնե-
րի, մուրացիկների եւ անօթեւանների ողբն
է բարձրանում: Այդտեղ միակ բանը, որ կա-
րող է անել սիրտ ունեցող մարդը, իր լու-
ման մէջ բերելն է, որպէս զի թիֆլիսացիներ
տանջանքները եւ մարդիկ ազատվեն սառ-
չելուց ու սովամահ դառնալուց:

Այս գեղեցիկ խօսքերի վրա եթէ մի բան
աւելացնելու կարիք կայ, այն է, որ շատ եւ
շատ մարդիկ զգան նրանց անողորմ ճշմարտու-
թիւնը եւ չը խնայեն իրանց օգնութիւնը:

Անցեալ տարի բոլոր հայերէն պարբերական
հրատարակութիւնների մէջ յայտարարվեց, որ
Պետերբուրգի կայսերական թատրոնի խմբա-
պետ Կազաչենկօ կազմում է հայկական երգե-
ցիկ խումբ, որ պիտի համերգներ տայ Պարիզի
համալսարանից ցուցադրուելու: Կարելի էր
անսխալ կերպով ենթադրել, որ իւրաքանչիւր
հայ, կարգալով այդ լուրը, ուրախացած կը լի-
նի, քանի որ պ. Կազաչենկօի ձեռնարկութիւ-
նը բաւական չոյում էր ամեն մէկի տոնային
ինքնասիրութիւնը: Հայկական երգեր աշխարհի
արդիւնագործական, մտաւոր տոնայնութեան
մէջ, որի համար անքան հակադաս պատ-
րաստութիւններ են տեսնվում: Բիշ առիթ կայ
հպարտանալու համար... Բայց պ. Կազաչենկօ
«ԲԵՐԵՄԵ» լրագրի մէջ յայտնում է, որ այդ լու-
րը մասամբ միայն ճիշդ է:

Կովկասում եւ Կրիմում եղած ժամանակ,
մի քանի տարի շարունակ, սիրելով արեւե-
լան ինչպէս երկրեցեական, նոյնպէս եւ աշ-
խարհական երաժշտութեան ամբողջ գեղեցի-
կութիւնը, աշխատում եմ լուսանկարչական
ճշգրտութեամբ գրի անցկացնել իմ բոլոր լսած
եւ ճշգրտ հայ ժողովրդական միջոցադրանքը,
որոնց ոչ միայն հոտարում եմ խմբի եւ
օրիւնարի համար, այլ եւ բոլոր չափու կարո-
ղութեան աշխատում եմ տարածել Պետեր-
բուրգում, Մոսկովայում, ինքնօրէն տուած
կօնցեքաների միջոցով, եւ նոյն իսկ անցեալ
տարի Պարիզում տուած իմ կօնցեքաների
մէջ «Հայկական սիւրսան» խոչըր աջողու-
թիւն ունեցաւ: Այն այդ պարիզեան աշո-
ղութիւնն էլ իմ մէջ միայն ծագեցրեց սար-
քել համալսարանից ցուցադրուելու մի-
ջաբ կօնցեքաներ, որոնք բացառապէս
նուիրված կը լինեն հայկական ազգային մե-
լօգիայի պրօպագանդային:

Այս բոլորը շատ լաւ. պ. Կազաչենկօի
միտքը, ձգտումը շատ հասկերական են եւ չը-
նորհակալութեան արժանի: Սակայն շարունա-
կենք:

Շատ համակարգներ դաս եւ այն հայերի
մէջ, որոնց հաղորդում էի իմ այդ ինչնան,
բայց... (օ՛հ, այս «բայցը») բայց երբ հարցը
եկաւ նիւթական կողմին, այդ ժամանակ ա-
մենք, որոնք մի վայրկեան առաջ խօսում
էին «իմ ազգին» ձեռնարկութեան մասին մի
անակարգելի հիացմունքով — խոնարհելով
իրանց կրակոտ աչքերը:

Հայի այդ յատկութիւնը հրաշալի կերպով
պատկերացրել է բանաստեղծը այս տողերի մէջ.
Ա՛խ, ինչպէս կուզեմ տեսնել մեր հային
Ազատ, ապահով, կրթված, ինքնագործ,
Ամեն հայի տուն — զբոսիտ երկնային...
Լոկ այդ բանն ինձից չուզեաւ մէկ գոհ:
Հայը կուզեաւ լաւ մարդ լինել, աշխարհի

նախանձը գրգռել իր կատարելութիւններով,
բայց առանց աշխատանքի, մանաւանդ առանց
կօպեկի զոհողութեան: Նրա կօպեկը — նրա
կուռքն է, որից բաժանվել չէ ուզում նա նոյն
իսկ փոքր ինչ մարդկալարի լինելու համար:
Այդ փաստը շատ գեղեցիկ կերպով ընդգծել է
եւ պ. Կազաչենկօ: Բայց նա միանգամայն յու-
սանաւել չէ կամենում:

Հոյր Պարիզում լաւ պատրաստված է —
առում է նա ի վերջոյ: — Մտնում է միայն ժա-
մանակ չը կորցնել եւ մարդիկ, որոնք ան-
կեղծաբար համակրում են ինչպէս, հաւա-
քեն ծախսերի համար մի գումար, կազմեն
վարչական յանձնաժողով:

Եւ պարոնը պատրաստ է իրականացնել
այդ միտքը, եթէ միայն հայի կօպեկը բարեհա-
ճէ կամենալ: Կը պոկվի այդ կօպեկը հայի սըր-
տից թէ ոչ...

ԳԼԽԱՒՈՐ ՄԱՍՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՄՏԸ

Շաբաթ օր, յունվարի 8-ին, Թիֆլիսի հա-
նգապետի ընտրարանում կայացաւ երկր ա-
շար ժ ի յ վ ն ա ս վ ա ծ ն եր ի ն • գ զ ո ղ զ լ ի ա-
ւ ո Ր մ ա ս ն ա ժ ժ ո ղ լ ի ն ի ս ա ռ, որին հրաւի-
րված էր Ախալքալաքից այդ օրը վերադարձած
բժիշկ Գ. Սարգսեան:

Պ. Նահանգապետի զեկուցումից երեւաց, որ
մասնաժողովի անցեալ ժողովից յետոյ մտել է
կօմիտեի գրամարկը նորից 10,276 ռուբլի
78 կ., որ ստացվել է հետեւեալ անձերից
եւ հիմարկութիւններից. «Тифл. Лист.»-ի
խմբագրութիւնից 1760 ռ., 19 կ., «Кавказ»-ից
620 ռ., 74 կ., «Каспий»-ից 627 ռ., 80 կ.,
«Մշակից» 8200 ռ., Ազովեան բանկից 1000 ռ.,
Փիթօնիկների առեւտրական սնից 1000 ռ., Ա-
խալքալաքից 3000 ռ., Ալեքսանդրօպօլից 1100
ռ., Վրաստանի էկզարխից 276 ռ., 76 կ., հայոց
կօնստօրիւնից 228 ռ., 3 կ., Գիւղաստեան-
կան կրեդիտային ընկերութիւնից 200 ռ., Ի.
Սվեյնից 100 ռ., Եկատերինսկիէից 150 ռ.,
Թիֆլիսի գաւառապետից 111 ռ., Սպառող ըն-
կերութեան ծառայողներից 18 ռ., 20 կ., զա-
նազան անձերից 63 ռ.: Նոյն նիստում Ա.
Մանթաշեան յայտնեց, որ նա իր կողմից
նուիրում է 5000 ռուբլի Ընդամենը կօ-
միտեի ձեռքին առ 9 յունվարի ժողովից է
106,464 ռուբլի 77 կօպեկ: Այդ հաշուից դուրս
են Ախալքալաքի տեղական մասնաժողովի ձեռ-
քին եղած գումարները: Բժիշկ Մալիխին յայտ-
նեց, որ Կարմիր խաչի ընկերութիւնը որոշել է
ուղարկել մի քանի հազար ռուբլի:

Նահանգապետը կարգաւ արեց հետագիւրները,
որոնք ստացվել են Ախալքալաքից եւ որոնցից
երեւում է հետեւեալը: Վնասված գիւղերի բը-
նակիչները ցրվել են այն գիւղերը, որոնք ան-
վտանգ են մնացել: Որոշված է բանալ Ախալ-
քալաքում ժամանակաւոր հիւանդանոցի մի
վարակիչ հիւանդութիւնների համար եւ ժամա-
նակաւոր ճաշարան գիւղերից քաղաք ժո-
ղովրդի չինականների համար: Որոշվել է հրա-
ւիրել դարձեալ մի բժիշկ տեղական կօմիտեի
կարգադրութեան տակ:

Թեւեալ քաղաքապետը դիմել էր հարցով
նահանգապետին, թէ արդեօք կարելի է հան-
գանակութիւն բանալ ժողովարարութեան հա-
մար: Որոշվեց պատասխանել, որ բոլոր յօժա-
րակամ նուիրատուութիւնները ընդունվում են
չնորհակալութեամբ, իսկ պաշտօնական ստո-
րագրութիւն դեռ չէ սահմանված:

Այնուհետեւ բժիշկ Գ. Սարգսեան արաւ մի
զեկուցում երկրաչափից վնասվածների եւ օգ-
նութեան գործի մասին Ախալքալաքում: Նա
առաջ բերեց մեռած եւ հիւանդ գիւղացիների
թւերը եւ նոյնպէս ստոված անատունների
քանակութիւնը: Այդ թւերը չենք արձանա-
գրում, աչքի առաջ ունենալով այն հանգաման-
քը, որ զեկուցանողն առանձին մանրամասն յօ-
դուած է նուիրել այդ գործին «Մշակի» մէջ:
Զեկուցանողը յայտնեց, որ տեղական կօմիտե-
սը որոշել է վնասված ընտանիքների խրաքան-
չիւր անդամին ամսական վճարել 3 ռուբլի:
Վնասվածներին եւ նրանց իրերը տեղափոխելու
համար վարձված են գույքօրհներ սահմաններ

օրական 2 ռուբլի վճարով Գիւղերում մնացած բնակիչներին շատերն ապրում են վրաններում եւ մանուկն են տնակը միայն կարծ ժամանակով։ Որքանի խնամակալութեամբ զբաղւում են անհատները, որոնք տնակում գիւղացիները յանձն են առել խնամել այդպիսիներին։ Այդպիսով ապաստարանի հարցին լուծումը պէտք է յետաձգել մինչեւ որ բոլորովին կը պարզվի իրերի վիճակը։ Վնասված գիւղացիները եւ նրանց գոյքը մասին մանրամասն տեղեկութիւններ ժողովուրդը նպատակով տեղական կոմիտեներ մի առանձին մասնաժողովի ձեռքով հարկային տեսուչ Լ. Ղուկասեանցի նախագահութեամբ, կազմել է ուսումնասիրութեան ծրագիր, որի մէջ յիշված են ընտանիքների կազմութիւնը, մարդկանց հասակը, որերի թիւը, անասունների քանակութիւնը, ապահովութեան աստիճանը։ Տեղական կոմիտեներ որոշել է գիւղերում ունենալ հացի պահեստներ։

Այդ գիւղացիներից յետոյ մասնաժողովը երկար կանգ առաւ ստակած անասունների մարմինները թաղելու խնդրի վրա եւ որոշեց հետագայի, որ անյապաղ սկսել այդ գործը։ Մասնաժողովը յայտ ունի, որ քիչ ծախքով կարելի կը լինի այդ գործը զուրկ ընել եւ յամենայն դէպս նշանակեց կրեդիտ մինչեւ 5000 ռուբլի։

Իշխան Ն. Արզումանյանի եւ Ա. Բալանթար յարուցեցին աների չինութեան խնդիրը եւ յայտնեցին այն կարծիքը, որ կարեւոր է վաղորդ պատրաստել այդ խնդրի նպատակադրման լուծման համար։ Աչքի առաջ ունենալով որ պէտք է տների չինութեան ժամանակ ուշադրութեան առնել տեղական պահանջները, անհրաժեշտ համարեց ընտրել յատուկ յանձնաժողով այդ գործի համար։

Մասնաժողովի հետեւեալ նիստը, որ թեով չորրորդն է, պէտք է տեղի ունենայ վաղը, չորեքշաբթի, յունվարի 12-ին, ցերեկվայ ժամի 4-ին։

ԵՐԿՐԱՇԱՐԺԻՑ ԹԵՏՈՅ ԱՍԽԱՒԱԼԱՔԻ ԳԻՒՂԵՐՈՒՄ

Հանելով Ախալքալաք գիւղերի 28-ին, երկու օրից յետոյ եւ այցելեցի կործանված գիւղերը։

Բոլորովին կործանվել են հետեւեալ գիւղերը. Մերենի, Մեծ եւ Փոքր Սաւար, Իսա-տիլա, Բեմանո։ Իսկ Կաշո, Բուրաշէն, Օլո-վեր, Մաջաղիա, Արազովա, Ղալբիլիսա, Տըր-կնա, Մօլիստա եւ ուրիշ գիւղերում շատ տը-ներ ճաքել կամ մասամբ միայն փլուզել են։ Այս գիւղերում մի քանի մարդկանց միայն զոհ է եղել, մի քանի տանեակ էլ անասուններ են սպանվել։ Այս գիւղերում վնասվածները հա-մարեա թէ օգնութեան կարօտ չեն, մի քանի բացառութեամբ, որոնք կարող են սեփական միջոցներով վերականգնել իրանց վնասված տները։ Բալիս գիւղը բռնում է այդ վնասված գիւղերի երկու կառնգործի միջոցով։ Տները ընդամենը համար բոլորն էլ անպէտք են դարձել։ Սպանվել են մօտ 100 գլուխ ոչխար եւ տաւար։ Մարդու զոհ չէ եղել։ Այնտեղ մօտ 60 տուն է։

Ուրիշ բան է առաջին հինգ գիւղերի դրու-թիւնը։

Տները այդ հինգ գիւղերում բնակութեան համար գրեթէ բոլորովին անպէտք են, վերա-նորոգել անհնարին է, պէտք է նորից կառու-ցանել։ Մարդկանց եւ անասունների զոհեր շատ են։

Բերենք մի քանի վիճակագրական տեղե-կութիւններ այդ գիւղերի մասին։

Մերենիան ունի 130 տուն, բոլորն էլ քանդված են, 166 մարդ սպանված են, 19 մի-րաւորված, սպանված է մօտ 500 գլուխ տա-ւար եւ ոչխար։

Մեծ Սամարը 47 տուն է, բոլորը քանդված, սպանված է 47 մարդ, 100 գլուխ տաւար եւ ոչխար։

Փոքր Սամարը 50 տուն է, բոլորն էլ փլու-ված, 28 մարդ սպանված է, 10-ը վիրաւոր-ված, տաւար սպանված է 100 գլուխ եւ ոչ-խար 200։

Իլաիլա—70 տուն է, որոնցից 65-ը բոլո-րովին փլուզված են, 5-ը վնասված, այնպէս որ կարելի է վերանորոգել եւ ապրել մէջը։ Սպան-ված է 8 մարդ, վիրաւորված 15 մարդ։ Տա-ւար եւ ոչխար սպանված է 111 գլուխ, ձի 4 հատ։

Բեմանոն 122 տուն է, որոնցից մնացել են միայն 6-ը, 89-ը բոլորովին քանդվել են, 26-ը մասամբ միայն։ Մարդկանց զոհ եղել է 46, 19 հոգի վիրաւորված են։ Վնասված անասուն-ների թիւը գեւ յայտնի չէ։

Մերենիան, որը այդ հինգում կործանված գիւղերից ամենամեծն է եւ ամենաշատ զոհ տուողը, ներկայացնում է վրաստանների մի կոյտ։

Անս տներ, որոնց պատերը եւ կոտորները փլուզվել են գետնի վրա, իրանց մէջ թաղվել ընակիչներին բոլոր կազմով, մտնել նրանց մէջ անհնարին է։ Անս մի ուրիշը, որի կոտորի մի մասը եւ պատերի մի կողմը փլուզվել են եւ դու-ք սարսափով մտնում էք մէջը, վախենալով թէ մի քայլ եւս—եւ դուք կը մնաք վրաստանների տակը։ Կան տներ, որոնք, ըստ երեւոյթին, անվնաս են մնացել, բայց մտնելով մէջը, տես-նում էք թէ կոտորի մի մասը քանդվել է, գերանները կտրուվել եւ պատերը ձեղքվել են։ Մէջը մնալ անհնարին է, վերանորոգելու հա-մար հարկաւոր է հիմնապէս քանդել։

Աւելացրէք զրան անասունների բազմաթիւ-գիւղերի ներկայութիւնը, որոնք, կաշիները քերթված, մերկ, բացօթեայ յանձնված են ըը-նութեան կամքին.—նեխութիւն եւ հոտ,—եւ դուք կը ստանաք նախկին Մերենիայի պատ-կերը։

Այդպէս են ընդհանրապէս եւ ուրիշ կոր-ծանված գիւղերը։

Մի քանի տանեակ գիւղացիներ, 2—3 զա-գախների հսկողութեամբ, աշխատում են այն-տեղ։ Մի մասը հանում է իր կարողութեան մնացորդները, ցորեն, անկողին, օրօրոց, կաթ-աւ եւ այլն, որ տանի մի ուրիշ գիւղը, ուր պատրաստվել է նրա ընտանիքը բարեկամի մօտ, միւս մասը քերթում է ոչխարների, եղ-ների, ձիերի կաշիները, որ տանի ծախի մի քանի կօպէկով եւ իր օջախի կարիքները հո-գայ, երբորք մասը հանում է վրաստանների տակից գերանները եւ տախտակները եւ հա-ւաքում է մի տեղ մինչեւ որ կարողանայ օգտ-վել նրանցից...

Ամենքը իրանց աշխատանքի, իրանց ցաւի հետեւի են ընկել։

Մօտենում եմ մի գիւղացու, որը բռնում է իր իրերը ձիու վրա, եւ հարցնում եմ.

—Ո՞ր պիտի տանես այդ։

—Այս մօտիկ գեղը, Բարաթի, պիտի տա-նես, աղա, մօրաքրոջս որդին հոն կապրի, կնոջս եւ մանչերիս էլ հոն եմ տարել։

—Յետոյ ի՞նչ պիտի տանես։

—Ի՞նչ պիտի տանես, աղա, մինչի գարունը այնտեղ կապրենք, այնուհետ կը տեսնենք թէ ի՞նչ կ'ենին։ Մենք այստեղ չենք կրնայ ապրել, աղա, մեկը տէրութիւնը ուրիշ տեղ պիտի տայ, որ տուն չլինենք։

—Եթէ կրկին այդպիսի տներ չլինելու լինէր, երկար չի դիմանա, ասում եմ ես—այդ ի՞նչ է, մի արշիլն չափ հող էք անել կոտորի վրա, այդ ծանրութեան գերանը կարող է դիմանալ։

—Բայց ի՞նչ ընենք, աղա, մենք ուրիշ կերպ չենք կրնայ չլինել։

—Դե օրինակ վերցրէք դուխօրներէից, տեսնում էք ի՞նչ թեթեւ եւ ամուր տներ ունեն։ Իմ խօսակցիս պատասխանում է ինձ, որ ի-րանք «աթաղան—բարաղան» այդպէս են տուլ-րել, թէ իրանք չէրողումի կողմերից են եկել եւ այնտեղ ուրիշ տեսակ չեն չլինում։

Թաղում եմ այդ գիւղացուն եւ մօտենում եմ մի ուրիշ գիւղացու, որը իրերով բռնած մի դուխօրի սայլի մօտ կանգնած է։

—Դու ուր եւ քոչում այստեղից, հարցնում եմ ես։

—Ես Փոքր Խանչալի գիւղիցն եմ, աղա, ա-սիկա հօրեղորսս որդու ապրանքն է, եկել եմ տանեմ մեր տուն, ընտանիքն էլ տարել եմ այնտեղ։

—Բայց հօրեղորդ որդին ուր է։

—Անոր հօգին Աստուած լուսաւորի, մնաց վրաստանների տակ իր 3 տարեկան որդու հետ, մնացին կիներ եւ երկու փոքրիկ աղջկերք։

—Ձեր գեղը հեռու է այստեղից։

—50 կիլոմ է, 2—3 օրվայ ճանիս է։

—Սայլը քանիսով ապտեղից մեր գիւղը։

—Հինգ րուբլով ապտեղից մեր գիւղը։

Եւ այսպէս բոլոր խորտակված գիւղերից մե-ծագոյն մասը ցրվել է զանազան գիւղեր, որը իր ազգականի մօտ, որը իր բարեկամի մօտ, իսկ ով չը վնասված գիւղերում ազգական կամ բարեկամ չունի, վարձով տուն է վերցրել եւ ապրում է ընտանիքով։ Վնասվածներից փոք-րագոյն մասը միայն (5000-ից մօտ 1200-ը մի-այն) ապաստան էր գտել քաղաքում կամ քաղա-ների շուրջին։

Դեկտեմբերի 19-ի երկրաշարժից յետոյ, երբ բոլոր տները փլուզվել էին, գիւղացիները այն աստիճանից են ընտանիքով վնասվածներից փո-րագոյն մասը միայն (5000-ից մօտ 1200-ը մի-այն) ապաստան էր գտել քաղաքում կամ քաղա-ների շուրջին։

Դեկտեմբերի 19-ի երկրաշարժից յետոյ, երբ բոլոր տները փլուզվել էին, գիւղացիները այն աստիճանից են ընտանիքով վնասվածներից փո-րագոյն մասը միայն (5000-ից մօտ 1200-ը մի-այն) ապաստան էր գտել քաղաքում կամ քաղա-ների շուրջին։

Կամայ—կամայ սկսեցին ծախել որը մնացած ոչխարը, որը երկրաշարժից ազատված կովը կամ եղը կհասնում եւ տեղափոխվել ուրիշ գիւղեր։ Ազատված ոչխարը եւ տաւարը նոյն-պէս քիչ-տարեւ են ուրիշ գիւղեր։ Խոտի պա-շարը թէեւ մնացել է, բայց գիւղացին նրանից օգտվել չի կարող, որովհետեւ տեղափոխելու միջոց չունի։

Քաղաքում, կոմիտեի մօտ ապաստան գտած մարդիկ, որա կարգադրութեամբ, գեկանները 31-ից սկսեցին նոյնպէս ուղարկվել գիւղերը։ Երկու գիւղ, Գուժուրդա եւ Դարդախ, յօժար կամքով վերցրին իրանց հագազօգութեան տակ մինչեւ դարուն մօտ 200 հոգի։ Ուղարկվողը առաջ բոլորին էլ բաժանվեցին առը չորեր։

Այժմ էլ գեւ երկրաշարժի հարուածները շա-րունակվում են եւ սարսափած գիւղացիները վախենում են քնել տներում։ Նրանք բարակ փայտից, խաւիչներով եւ խոտով ծածկած, չա-դիրներ են չինել եւ ապրում են նրանց մէջ։

Բժ. Գ. Սարգսեանց

Ախալք. յունվ. 4-ին.

Թ Ա Տ Ր Օ Ն

Ուրբաթ, յունվարի 7-ին, վրաց գերատաւա-կան խումբը խաղաց, առաջին անգամ, Գաբ-րիէլ Սուսուրկեանցի «Էլի մէկ զոհ» կօմիդիան, ի նպատ ու. Գաբրիէլ-Յապարէլի Այդ պիւ-սը վրաց բեմի վրա խաղացվել է 15 տարի սրանից առաջ՝ երեք գործողութեամբ, իսկ հինգ գործողութեամբ խաղացվեց առաջին ան-գամ Դերերը շատ աղող էին բաժանված։ Թէ գերատաւաններ իրանց խաղով եւ թէ պիւսը իր բովանդակութեամբ շատ հետաքրքրեց հաս-րակութիւնը, թէեւ նա ձանձրացաւ պիւսի երկարութիւնից, ներկայացումը տեսեց մինչեւ գիշերվալ ժամի 1-ը։

Դերատաւաններից շատ լաւ էին իրանց դե-րերում՝ օր. Արաչիձէ եւ պ. Շաութիով ու պ. Արաչիձէ—վաճառական Սարգսի դերում. ինչ վերաբերում է իրան՝ ա. Գաբրիէլային, պէտք է ասած, որ այս անգամ, գուցէ հիւանդութեան պատճառով, իրան յատուկ տաղանդով չը կա-տարեց իր դերը։ Սալոմէի դերը աւելի լաւ է կատարում մեր բեմի վրա ա. Սաթիկի Զմը-կեան։ Թատրոնը լի էր հասարակութեամբ։ Երբորք գործողութիւնից յետոյ եւ ներկայաց-ման վերջը հեղինակը մի քանի անգամ բեմ հրաւիրվեց, իսկ ա. Գաբրիէլա ստացաւ բազ-մաթիւ ընծաներ։

Կիրակի, յունվարի 9-ին, նոյն թատրոնում կայացաւ հայ գերատաւանական ընկերութեան երկրորդ ներկայացումը. Խաղացին «Ջաւախ» մեղօդրաման, որի բովանդակութեան մասին չարժէ խօսել։ Այդ պիւսի հետ Թիֆլիսը ծանօթ է 25 տարի առաջ. ուսւ խմբի կողմից այդ պիւսը վաղուց է գցված արխիվը։ Թէ ինչու հանցին այդ պիւսը եւ ուրիշ հարկաւորից, դժուարանում եմ պատասխանել։ Առհասարակ գերատաւանները թուութիւն ունեն հնութեան վրա քնել եւ նրանով իրանց զուարճացնել, թէկուզ լինի նրա մէջ մի լաւ դեր։ Այդպէս էլ այդ ե-րեկոյ եղաւ։ Ինչպէս բանից երեւոյց՝ այդ պիւսը Թիֆլիսեան ժողովրդի բնականորէն էր եւ դրանք երկուսն էլ լաւ դերեր ունէին, որոնց երեւի խաղում են իրանց բեմական գործունէութեան օրից։ Բաւական է, որ գերատաւան ինքը լաւ դեր ունենայ, ամեն ինչ զոհ կը բերի. եւ ինչ-պէս պահանջել գերատաւանից խաղ, քանի որ նրան տուած նիւթը, դրութիւնը կեղծ է եւ չըլան էլ անձնաթիւ։ Այդ պատճառով գերա-տաւանների խաղը ապաւորութիւն չը գործեց, կար եւ դեր չիմացող, եւ դա զարմանալի չէ, մի ձեռքով երկու ձեռքով չէ կարելի բռնել թատրոնը, ի հարկի, դատարկ էր եւ այն էլ կիրակի օրը, եւ դա մասամբ գերատաւանների մեղն է։

Ցանկալի է, որ ընկերութիւնը աւելի լուրջ վերաբերվի դէպի իր գործը։

Thaleia

ԵՐԿՐԱՇԱՐԺԻՑ ՎՆԱՍՎԱՄԵՆԻՐԻ ՕԳՏԻՆ

Ստացանք երկրաշարժից վնասված գիւղա-ցիւղերի օգտին հետեւեալ նուէրները.

Ե կ ա տ ե ի ռ ի ո ղ ա ռ ի ց՝ Գաբրիէլ քահանայ Բաղդասարեանց (հետագրով փոխադրած) 800 ռուբլի, որ հանդանակել է նա Իվան Ստեփա-նեանցի, Լեւոն Մերչերեանցի եւ ուրիշների ա-ջակցութեամբ։

Հին-Ղըբէմ քաղաքից՝ Խորեն եպիսկոպոս Ստեփանէից 50 ռուբլի (հետագրով փոխադրած)։ Թ Ի Բ ի խ ի ց 1) Տ. Ս. Բարսամեանցի 10 ռ., 2) Յ. Քէչիշեանցի, Լ. Միխայիլեանցի, Գ. Մար-կոսեանցի, Ա. Կապուհեանցի մի-մի ռուբլի, 3) Կ—ից 12 ռուբլի եւ մի քանի կտոր հա-

գուսներ. Նուիրատուններն են՝ Յ. Կոկո-նանց 1 ռ., Ալեքէյ Լազարեանց 1 ռ., Ե. Ա. Բէշեանց 1 ռ. 50 կ., Լ. Տէր-Գաբրիէլեանց 50 կ., Մարիամ Մ. Չորանեանց 2 ռ., Ռուբէն 1 ռ., Տէր-Գաբրիէլեանց 50 կ., Գ. Մատուրեանց 20 կ., Վ. Մանուկեանց 1 ռ., Յ. Փայելեանց 10 կ., Յ. Կարախանեանց 10 կ., Վ. Տ.—Յով-հաննիսեանց 20 կ., Ուն 40 կ., Ս. Դաւթեանց 50 կ., Մ. Դաւթեանց 50 կ., Վարդապետեանց 1 ռ., Ս. Մեղրեանց 50 կ., 4) Աւստրալի ջրանցքի ծառայողներից 18 ռ. 30 կ.։ Նուիրա-տուններն են՝ Մ. Պետրոսեան 2 ռ., Խ. Շահա-գաբեան, Ս. Նալբանդեան, Հ. Պօլադեան, Ա. Օսեյով, մի-մի ռուբլի, Ա. Նալբանդեան, Յ. Աւետիսեան 60-ական կօպ., Տ. Գէորգեան, Յ. Յարութիւնեան, Դ. Սահակեան, Գ. Մանու-կեան, Մ. Պօղոսեան, Գ. Պետրոսեան, Կ. Մա-նուկեան, Յ. Մանուկեան, Պ. Գապարեան, Ա. Մանուկեան 50-ական կօպ., Ի. Լեօբեդեւ 2 ռ., Ի. Նոնիկեան 50 կ., Ա. Իվանով 1 ռ. 50 կ., Բ. Վինոգրադով 1 ռ., Մուսիկեանց 1 ռ., 5) Թիւրքիացի մի ոմից 3 ռ.։

Պ ե ա տ ի ղ օ Ր Ս ի խ ի ց, Ա. Մէլիք-Սարգսեա-նից 10 ռ., Մ. խաչատրեանից 5 ռ.։

Ա լ է ք ա ղ օ Ր օ ղ ի ց, Ա. քահ. Զաքա-րեանից 2 ռ., Ս. Միքայիլեանից 3 ռ.։

Ն օ Ր — Ն ա խ ի ջ Ե ա Ն ի ց, Յ. քահ. Նախա-չեանից 2 ռ.։

Ք ո լ թ ա խ ի ց, Եղը. Աշխանցիներից 5 ռ.։

Ա շ ա ռ ա ղ Գ ի լ ի ց, Յ. Փարվանեանից 20 ռ., Կ. Ազատեանից 5 ռ.։

Գ ա Ն ձ ա խ ի ց, Մ. քահ. Տէր-Յովսէփեանից 6 ռ., որ նուիրել են Ա. Հայրապետեան 3 ռ., Մ. Միլոտեան 2 ռ., Յ. Իսահակեան 1 ռ.։

Դ ե Ր ե Ն ի ց, Ա. Շահիջանեանից 30 ռուբ-լի, որ նուիրել են Մ. Սարգսեանց 5 ռ., Եղը. Իսախանեանց 3 ռ., բժ. Ա. Սիմօնեանց 2 ռ., Ուն 2 ռ., Յ. Գրիգորեանց 2 ռ., Ե. Մա-րուկեանց, Յ. Կիրակոսեանց, Կ. Դազարեանց, Ա. Դազարեանց, Բ. Սարգսեանց, Մ. Ազա-տեանց, Կ. Տէր-Յովսէփեանց, Ն. Մանուկեա-նեանց, Մ. Յարութիւնեանց, Գ. Պետրոսեանց, Ա. Թառայեանց, Խ. Իսախանեանց, Ա. Տէր-Միկայիլեանց, Գ. Բալայեանց եւ Ա. Շահիջա-նեանց մի-մի ռուբլի, Յ. Զորեանցով 50 կ., Յ. Տէր-Յովսէփեանց 50 կ.։

Ը Ն Պ Ո Ւ Ն 985 ռուբլի 30 կօպէկ։ Մինչեւ այժմ ստացել ենք 11039 ռ. 91 1/2 կօ-պէկ եւ երկու ոսկի ուսպի, ուղարկել ենք 10,000 ռուբլի։ Մեզ մօտ մնում է 1039 ռ. 91 1/2 կօպ. եւ երկու ոսկի ուսպի։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կ. Պօլի լրագրիները հաղորդում են, որ պ. Գ. Զանչեան նորից 5000 ռուբլի է ուղարկել Օրմանեան պատրիարքին՝ 8-րդ որբանոց բաց անելու համար։ Որոշված է այդ գումարով աղ-ջիկների որբանոց հիմնել Մուշի մէջ։ Օրմա-նեան պատրիարքը մի յատուկ թղթով տուել է պ. Զանչեանին «որբերու խնամակար» պա-տուանություն։

Շատերը հարցնում են մեզին, թէ արդեօք բացվում է ներկայ յունվարի Թիֆլիսի առեւ-տրական դրոյցը, թէ բացումը յետաձգված է։ Կարող ենք յայտնել, որ առաջ դիտաւորութիւն կար, արգարեւ, բանալ դպրոցը յունվարին, բայց նախապատրաստական մի քանի գործերի, զպրոցի կառավարչի հաստատութեան, մանկա-վարժական խմբի կազմութեան ուշանալու պատ-ճառով բացումը յետաձգված է մինչեւ աշուն։ Հաւանական է, որ սեպտեմբեր ամսից կը սկսվի աշակերտների ընդունելութիւնը։

Փրանսիական լրագրիների մէջ կարդում ենք. «Պ. Գէորգ Բաշինջաղեան, հայ նշանաւոր նը-կարիչը, որը գտնվում է մեր երկրում, հանդէս է դնելու 1900 թււի ցուցանանքների ուսուց բաժնի մէջ երկու հիւանալի պատկերներ, որոնք ներկայացնում են «Արարատը» եւ «Ամպերը», իր հայրենի երկրի տեսարանները։ Կարելի է տես-նել իր արուեստանոցում եւ ուրիշ ոչ պակաս նշանաւոր պատկերներ, որոնք ներկայացնում են Սեւանի լիճը եւ կղզին, Կօջօրը, Բօթօմը եւ Կովկասի ու ուսուց Հայաստանի գիւղա-կան գեղեցկութիւնները»։

Մայրաքաղաքի լրագրիներում կարդում ենք հետեւեալ. «Մեզ հաղորդում են Պետերբուրգից, որ ներկայ յունվար ամսու-մ ժողովրդական լուսաւորութեան միջնադրու

Գիրքը բաղկացած է մեծագիր 318 երեսից և արժէ 1 ռուբլի: Ճանապարհածախսով 1 ռ. 20 կ.:

Յունական 8-ին, վրացիների ազնուականութեան թաղամասում տեղի ունեցաւ Կարա-Մուրզայի համերգը, որի ծրագիրը բաւականին բազմազան կերպով էր կազմված: Ցաւալի է միայն, որ հասարակութիւնը հարկ չէ համարում քաջաբերել անխնայ աշխատանքներ թատրոնը կէսից աւելի դատարկ էր:

ՇՈՒՇՈՒՅ մեզ գրում են. «Երեք չորս ամիս անցնելուց յետոյ՝ թեմական դպրոցի ուսուցչական խումբը հազիւ հազ կարողացաւ յօգուտ նոյն դպրոցի աղքատ աշակերտների մի ներկայացում գլուխ բերել: Դեկտեմբերի 30-ին ներկայացրին Մօսկէի «Սկապինի արարքները» կոմիդիան և «Օսկան Պետրովիչը դժոխքում» վերջին: Խաղացողների մէջ իրանց մտացածին խաղով աւելի աչքի էին ընկնում պ. պ. Պ. Քուլանսկան, Թ. Թուսկան և մասամբ էլ Շամայանան: Մնացած դերակատարները թէ իրանց դերերը չէին սովորել և թէ զուրկ էին բեմական ընդունակութիւնից: Շուշու հասարակութիւնը չէր բարեհաճել այդ երեկոյան իր ներկայութեամբ նպատակ ներկայացմանը: Թատրոնը կիսով չափ դատարկ էր»:

ՂՈՒԲԱՅԻՑ մեզ գրում են. «Ջորջինէի ճրագրային երկերը բնակից Փանկանց քահանայն էր քարոզիչ և յորդոցից ժողովրդին, որ առատաձեռն նուիրատուութեան անեն Ախալքալաքի երկրաշարժից վնասված աղքատներին: Երկու մարդ են ընտրված նպատակներ ժողովրդի համար՝ հայոց դպրոցի ուսուցիչ Տիգրան Վարդանան և Գեորգի Տէր-Յովսէփեան, որոնք պիտի տնէ տուն և խառնութեան խնամք չընեն»:

ՇՈՒՇՈՒՅ մեզ գրում են. «Մենք անհամբեր սպասում էինք տեսնելու, թէ արդեօք չուշիցները կը մասնակցեն Ախալքալաքի դաւաճում երկրաշարժից վնասված գիւղերին օգնելու գործում: Կազմված է մի մասնաժողով, որը հանգանակութիւն է բաց արել յիշել գիւղերին նպատակ ուղարկելու համար: Լիալոյս ենք, որ չուշիցները միտով կը վերաբերվեն այդ հանգանակութեանը և ամեն ոք կարողացածին չափ կը տալ իր լուսման թշուառացած գիւղացիներին օգնութեան հասցնելու»:

ԱՐՏԱԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻՍՅԻՑ

Բերլին, յունվարի 14-ին
Երէկ, յունվարի 13-ին, երեկոյան 7 ժամին՝ «Մարդաբանական ընկերութիւնը» տեղիս աղագրական մեղմումի դահլիճում մի արտասովոր ժողով էր հրաւիրել. գերմանացի երկու երկուստարգ գիտնականներ՝ Լէման և Բէլք գիւղացու էին տալու Հայաստանում կատարած իրանց ճանապարհորդութեան մասին:

Ժողովին ներկայ էր երկուսն մեծ բազմութիւն. լի էր ոչ միայն դահլիճը, այլ և վերնաշարքը. ի միջի այլոց ներկայ էին՝ Մ. Բ. Գէյ, Վ. Բրուսով և ուրիշ յայտնի պրոֆէսորներ այստեղի համալսարանից, նոյնպէս կրթութեան մինիստրութեան և Բերլինի «Գիտութեան ճեմարանի» ներկայացուցիչները: Ընկերութեան նախագահը՝ Վալդայեր նիստը բաց անելով՝ ողջունեց երկու երկուստարգ ճանապարհորդներին, որոնք առողջ և ապահով, մանաւանդ «ձոյն նիւթերով զինված» յետ են եկել:

Այնուհետև ամբիօս բարձրացաւ Վ. Բրուսովը, որ համառօտ կերպով այս գիտնական ճանապարհորդութեան անցնելիք և առնադրական նրա նորագոյն հետազոտութիւնները մասին խօսեց: Նախկին տեսակէտից, Բրուսովը անցնելիք սկսած Կովկասը համարում է մարդկային սեռի և նրա կուլտուրայի օրրանը. բայց դառնում ենութիւնները հնդկաւրոպական նշաններ քիչ են ցոյց տալիս. Կովկասցիները աչքի ընկնող հաստ և կարճիկ գլուխ ունեն. բացի դրանից «մետաղի կուլտուրայի» հին հետքերը միայն մասն ապահովում են՝ օրինակ, գտնված բրոնզեայ հնութիւնները զարգացած տեխնիկայի շնորհիւ են և ոչ հին՝ սկզբնական: Այնպէս որ դժուար է հաշտել այն կարծիքի հետ, թէ հնդկաւրոպական կուլտուրան իր սկիզբը Կովկասում առած լինի: Նոյնպէս բարդ է և լե-

զուական խնդիրը: Կովկասի լեռնականները բաժանված են բազմաթիւ փոքրիկ ցեղերի և տարբեր լեզուներով են խօսում, որոնք «մարդկային սկզբնական լեզուի»՝ հնդկաւրոպականի հետ ոչ մի նմանութիւն չունեն: Որովհետև «նախահայերը» խաղէացիները տարածվում էին Բարեկոնեան պետութեան հիւսիսային սահմաններէ՝ Եփրատի և Տիգրիսի ափերից մինչև հին Հայաստանի հիւսիսային սահմանները՝ Կոզքից՝ այս պատճառով Վերիօվ ենթադրում է, որ Կովկասի սկզբնական կուլտուրան նոյնպէս խաղէացական պէտք է լինի: Բուն հայերի մասին նա այն կարծիքն է յայտնում, որ վերջիններս լեզուն հնդկաւրոպական ճիշդին է պատկանում, իսկ տիպը՝ սեմիտական է. իսկ թէ հայերը եկուրներ, գաղթականներ են, որոնք խաղէացիներին յետ են մղել՝ այս մասին նա չէ կասկածում:

Վերիօվից յետոյ խօսեց Լէման, որ ամենից առաջ չնորակալութիւն յայտնեց այն բոլոր անձնաւորութիւններին և ընկերութիւններին, որոնք իրանց օժանդակութեամբ այս մեծ ճանապարհորդութեան գործը զեւրացրել են. այնուհետև անցաւ նախահայկական պատմութեանը: Նախահայերի հին խաղէացիների մասին առաջին յիշատակութիւնը գտնում ենք նորագոյն աշխարհագրութեան հիմնադիր՝ Կարլ Ռիտտերի մօտ, որի դրոյմամբ մի այլ գիտնական՝ Շուշու 1828 թվին ճանապարհորդում է դէպի Հայաստան՝ Վանի բեւեռագրերն ուսումնասիրելու: Այնուհետև Բէլք իր առաջին ճանապարհորդութեան ժամանակ (1891) բաւական տեղեկութիւններ են նիւթեր է հաւաքում և վերջապէս այս անգամ՝ երկարատեւ ճանապարհորդութեան միջոցով՝ նրանց աշուղդ է ոչ միայն արդէն յայտնի բեւեռագրերը տեսնել և ստուգել, այլ և 100-ից աւելի նորերը գտնել: Այս բեւեռագրերի լեզուն բոլորովին տարբերում է բարեկոնեան՝ առօրականից և առնադրական ոչ հնդկաւրոպական և ոչ սեմիտական է:

Ասորական արձանագրութիւններում խաղէացիները կոչվում են «Ուրարուի» կամ «Նալիրի»-ի ժողովուրդը, որ դարեւ շարունակ դիմադրում է բարեկոնեան՝ առօրական պետութեան և իր անկախութիւնը պահպանում մինչև Թիւրքիայի զարթոյնի ժամանակ, մօտաւրապէս Քրիստոսից 600 տարի առաջ:

Խաղէացական թագաւորներից ամենանշանաւորը, Լեմանի կարծիքով Մ. Բ. Բրուսովն է, որն իր ժողովրդի բարօրութեան համար ոչ մի ջանք չէ ինչպէս Նա Վանի նշանաւոր բերդի հիմնադիրն է, որ իր ստորերկրային հակապակն ջրանցքներով, անմեղքեանի ապառաժներով շինված բնակավայրերով այժմ մեծ հիացմունք է պատճառում եւրոպացի ճանապարհորդներին: Այնուհետև խօսեց Բէլք, որը առանձնապէս կանգ առաւ խաղէացիների նախապատմական շրջանի և կուլտուրայի վրա: Խաղէացիներին նա համարում է «Վրաքալիստիկան» և «Երկաթի կուլտուրայի» ստեղծողները: Նա յայտնեց ի միջի այլոց, որ նախադասական հետազոտութիւններ անելիս՝ նրան աջողվել է գտնելու այդպէս ասած մի խորթ, որ մետաղական կուլտուրայի ոչ մի հետք չէ կրում, այլ ամբողջովին «քարի շրջանին» է պատկանում:

Նա նոյնպէս այն կարծիքն է յայտնում, որ հայերը եկել են խաղէացիներին յետ՝ են մղել, քիչ են դէպի լեռները: Վանի լճից դէպի աւրեւմուտը Սասունի անմաստիկ լեռներում նա պատահել է այնպիսի լեռնաբանական, որոնք «արտաքին աշխարհի մասին ոչ մի տեղեկութիւն չունեն, ոչ քիչ չեն հպատակվում» թէ և մասամբ հայերն են մասամբ քրդերն են խօսում, բայց ոմանք խօսում էին և բոլորովին անհասկանալի լեզուով: Նա ենթադրում է, որ սրանք հին խաղէացիների մնացորդներն են: Տրապիզոնի կողմերում նա նոյնպէս այսպիսի մնացորդներ է հանդիպել:

Ժողովը, որ մօտ 3 ժամ տեւեց՝ կրկնակի հետաքրքիր և կենդանի դարձաւ այն հանգամանքով, որ ամբողջովին յարաբերական 50-ից աւելի շատ լաւ աջողված պատկերներ ցոյց տուին, որոնք մեծ մասամբ Վանի կամ Վանի շրջակայքից էին. «Ունեւորածները» հետքերը նոյնպէս անպակաս էին թէ խօսքով և թէ պատկերներով...

Աւելորդ չեմ համարում յայտնել, որ Լեման ներկայ սեմիտութեամբ այստեղի համալսարանում կարդում է «Բարեկոնեան-առօրական և նախահայկական պատմութեան» մասին:

W.

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՄԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

7 յունվարի

ՍՏՕԿՆՕԻՄ: «Բեյաուր գործ»: Այսօր Բիւրագրայից բացվեց թագաւորի գահական ճառով, թագաւորը յայտնեց, թէ ինքը հնարաւորութիւն ունեցաւ էլի մի անգամ ապացուցանել իր խաղաղասիրութիւնը՝ ուղարկելով անցեալ տարի լիազօրներ Հապայի կոնֆերենցիայում ներկայ լինելու: Թէ և կապած դաշնագրի և կոնֆերենցիայի շնորհիւ բաւարար հետեւանքներ են սպասվում միջազգային խաղաղութիւնն ապահովելու վերաբերմամբ, այնու ամենայնիւ ոչ մի երկիր ազատված չէ ինքնապաշտպանութեան հոգսերից, որովհետև ամեն մի ազգի լինելու կամ չլինելու հարցը չէ կարող միջնորդները որոշման նիւթ լինել:

ԼՕՆԴՕՆ: «Բեյաուր գործ»: Մօսկու-Ալիսից հաղորդում են յունվարի 3-ին, թէ զօրքերի առաջխաղացութիւնը Լէզի-Սմիթն ազատելու համար սկսվեց չորեքշաբթի Ֆրէրից և Զիվելէյից: Թշնամին, որ յունվարի 2-ին գտնվում էր Պոտոլիսից արդիւնքի մօտ, անտեղեկ էր անդիպանքների շարժմանը: Գաղթականական զօրքերի մի մասը անցաւ գետը, անտես անելով թշնամու կրակը:

Բուլլերը հրատարակեց մի ազգու հրաման, որ սկսվում է այսպէս. «Մենք գտնում ենք ազատելու Լէզի-Սմիթում փակված մեր ընկերներին: Յետ ցնալ չէ կարելի. մի և նոյն ժամանակ նախազգուշացնում ենք, որ սպիտակ դրօշակը չը պէտք է անպայման անձնատուր լինելու նշան համարել»:

ՊԵՏԵՐՍԲՈՒՐԳ: Յունվարի 7-ին, ժողովրդական լուսաւորութեան միջնորդի նախագահութեամբ սկսվեցին միջնակարգ դպրոցներում բարեփոխումներ մտցնելու համար կազմված յանձնաժողովի պարապմունքները:

ԿԱՊԵՏԱՒ: «Բեյաուր գործ»: Բօլշևիկները քանդակներ երկաթուղային կամուրջներն են ջրանցքները Շանկինսկիի միջոցով են Կրիլոստի մէջտեղում 11 1/2 մղոն տարածութեան վրա: Պրետորիայի նոր ամերիկական հիւպատոս Գէյ եկաւ այստեղ:

ԼՕՆԴՕՆ: «Բեյաուր գործ»: Դեմոստրացիոն կուլից յետոյ, որ տեղի ունեցաւ երեկոյան 7 ժամին, դրանց մի քանի բուրներն են բանակ դրեց այստեղ: Բօլշևիկի կողմից սպանվեցին և վերաւորվեցին 21 մարդ, գերի ընկան 15 մարդ: Անգլիացիների կորուստը չնչին է:

ԼՕՆԴՕՆ: «Բեյաուր գործ»: Պաշտօնապէս հաղորդում է, թէ հետեւեալ շաբաթ Հարաւային Աֆրիկա կուլարկվին 72 թիւդանթ, 3,710 մարդ և 2,210 ձի:

ԲԵՐԼԻՆ: Մէլլերը ձեւակերպում է այն հարցադրումը, որ առաջարկված է բեյաուրի բոլոր կուսակցութիւնների պատկանող 300 անդամների անունից գերմանական նաւերի դրաւման վերաբերմամբ իր ձառի վերջում, որ առաջարկեց և ուղղած էր Անգլիայի դէմ, Մէլլեր բացականչեց. «Թող Անգլիան իր վարմունքով չը զրգուէ բոլոր ազգերի հակակրօնը»: Բիւլլով մի երկար ճառով պատասխանեց Մէլլերին, և յայտնեց, թէ յոյս ունի, որ այսուհետև այդպիսի դէպքեր այլ են չեն կրկնվի, թէ գերմանական կառավարութիւնը ցանկանում է, որ դրաւմանը չը սկսվին նորից աւելի եւս այն պատճառով, որ նա ձգտում է բարեկամական յարաբերութիւններ պահպանել Անգլիայի հետ:

ՊԵՏԵՐՍԲՈՒՐԳ: Պաշտօնապէս հաղորդում է, որ անգլիացիների յունվարի 5-ին, առաւօտեան, սկսեցին անցնել Տուգելա գետը երկու տեղում: Երեւի շուտով տեղի կունենայ ճակատամարտ: Պրուսիայը երեք զրահապատ գնացքով մօտեցաւ Գալօրոնէսին: Ամերիկ է, որ նա մտադրութիւն ունի ազատել Մեֆիկները:

ԼՕՆԴՕՆ: Լազգիները հաղորդում են, թէ հրաման է արված անյապաղ կազմակերպել ութերորդ գիւղերին Օլդերշոտում:

ՎԱՇԻՆԳՏՈՆ: Բոյոր առաջարկված վճիռներից սենսան ընդունեց այն վճիռը, որով ինքնիշխան է Մալ-Կինէյին հաղորդել, թէ մի անձնաւորութեան կողմից ջանքեր եղել են արդեօք ճանաչվելու, որպէս Տրանսվալի ներկայացուցիչ և եթէ եղել են, բաւարարութիւն արված է այդ ջանքերին, իսկ եթէ բաւարարութիւն չէ առած՝ ինչ պատճառով:

Գլխի մի ազգու ճառ արտասանեց, որի մէջ ասաց, որ թէպէտեւ ինքը բարեկամաբար է վերաբերվում Անգլիային, բայց և այնպէս յաւում է, որ այդպիսի մեծ պետութիւնն աշխատում է կործանել հանրապետութիւնը, ցաւում է մանաւանդ այն պատճառով, որ Անգլիան յա-

ւակնութիւն ունի ազատութեան պաշտպան կոչվելու:

Վիէննա: Կայսրն ընդունեց մինիստր-նախագահ Վիտտէլի հրաժարականը և նշանակեց նրան հաղորդակցութեան ճանապարհների մինիստր: Նշանակված են և միւս մինիստրները:

ԼՕՆԴՕՆ: «Times»-ին հաղորդում են Պրետորիայից, թէ Ուորթըն, Դանդոնալդ, Գրիւարդ, Կլէրի և Գարտ գեներալները իրանց զօրաւորութիւններով գրաւեցին մի շատ կարեւոր դիրք, որ տիրում է Լէզի-Սմիթի անողջ հովտի վրա: Զօրքի մի մասը մնաց Չիլէյէլում, որպէս զի արդիւնք բօլշևիկներն անցնել Տուգելա գետը Կոլէնյօրի մօտ:

ԼՕՆԴՕՆ: «Daily Telegraph»-ին հաղորդում են Կահիրէից, թէ յունվարի 7-ին, երեկոյան, այնտեղ տեղեկութիւն է ստացված, որ Օսման Դիւման գերի է առնված: Վաղը նրան կը բերեն Սուախի:

ԲԵՆՍՈՒՐԳ: «Բեյաուր գործ»: Երկու հանրապետութեան պատկանող բօլշևիկները հաւաքած տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ բօլշևիկները պատերազմի սկզբից մինչև հիմա կորցրել են ընդամենը 6,425 մարդ թէ սպանված և թէ վիրաւորված:

10 յունվարի

Վիէննա: «Wiener Abendpost» լրագրում տպված է, որ կայսրի վստահութեամբ հրաւիրված կառավարութիւնը քաղաքական ամենահանաւոր խնդիր է համարում, համաձայնութեան միջոցով, ազգային երկպառակութիւնների կարգադրումը, կուլտուրական տնտեսական նպատակներին հետեւելու և բոլոր ոյժերի կենտրոնացումը՝ պետութեան առաջադրութեան համար: Ազգային կուլից առաջացած ծանր վրնասը թափանցեց հասարակութեան բոլոր լուրջ շրջանները և այն համոզմունքը արարեց, թէ պէտք է կամ անյապաղ վերջ դնել ազգային կուլից, կամ էսպէս մեղմացնել այդ կուլից: Արդէն կառավարութիւնը այս օրերս կը յայտարարէ այդ բանը և կառավարիչ գործի մէջ չափ ունեցող կուսակցութիւններին հաստատարմատոր անձինք ուղարկել Վիէննա կոնֆերենցիայի, որի ընտրութեամբ, իր եռանդուն մասնակցութեան հետ կառավարիչ մի շարք կոմպրոմիսներ գոյութիւն ունեցող տարաձայնութիւնները վերացնելու համար:

ԲԱՆԱԿ ՍՊԻՐԱՆԻՍ: Մեծ Ամբողջ օրը ուսման էին արձակում թշնամու պատմէշների վրա: Լէյալտօնի բրիգադան առաջ շարժվեց և գրաւեց այն բուրը, որ գտնվում է բօլշևիկների 2000 եւրոպական ճեմարանի վրա: Բրէիֆօրտտէնի մօտ, այն ինչ հրացանաձիգների վաղաք, որը յարձակում էր գործում աւերականների զօրաբաժնի հետ, ստիպված էր երկարակիւ թշնամու զօրեղ կրակին: Ուորթընի զօրքերը դիմանում էին դիրքի վրա, բայց թշնամին յետ չը մղվեց մինչև հետագրի ուղարկելու: Ուրաւ-կոմիթեան կողմը այնպէս զօրեղ է, որ խոտը վառվեց: Հինգշաբթի Դէմոստրացիոն զօրքերը յանկարծակի հանդիպեցին 350 բօլշևիկներին: Բլիլ վրա կանգնած անգլիացիները կրակ բացեցին, բայց թշնամին ոչինչ փորձ չարեց պատասխանել դրան:

ԼՕՆԴՕՆ: Զինուորական վարչութիւնը Բուլլերից հառաքել ստացաւ Սպիլմանիսից, որի մէջ տպված է, թէ Ուորթընի պաշտպանելու նպատակով և բօլշևիկների զօրքերին ստիպելու համար մնալ ամբողջութեամբ Պոտոլիսի տէրադիրֆտի մօտ, երէկ Լէյալտօնը խիստ հետախուզութիւն կատարեց, որի պատճառով բօլշևիկները ստիպված էին ամբողջ օրը իրանց խրամատների ետևը մնալ: Անգլիացիների կողմից սպանվեցին երկու մարդ, վիրաւորվեցին 20 և կորան երկու հօգի:

ԼՕՆԴՕՆ: Բուլլերը հետագրեց գիւտորական մինիստրին Սպիլմանիսն բանակից, որ «Կլէրի» Ուորթընի զօրքերի մի մասը հետ պատերազմում էր առաւօտեան 6 ժամից մինչև երեկոյան 7 ժամը. չնորհիւ արտիլերիայի նրան աջողվեց մօտաւորապէս երեք մղոն տարածութեան վրա տիրել մի լեռնաշղթայի: Այժմ նրա զօրքերը բանակում են նուաճած տեղի վրա: Ամենանշանաւոր դիրքը, սակայն, դեռ պէտք է տիրել: Մեր կորուստները մեծ չեն. մինչև երեկոյան 6 1/2 ժամը կային 100 վիրաւորվածներ: Սպանվածների թիւը դեռ որոշված չէ:

ԼԷԻՒՍՄԻԹ: Թշնամին գիրքի վրա նոր թնդանութիւն դրեց, ինչպէս ենթադրում են ութ գիւտանդները, վերջին օրերը ոմակոծութիւնը ստանկացաւ, բայց չնչին վնաս է հասցնում: Զօրքերը ուրախացած են Բուլլերի զօրքերի աջող յարձակումով: Երեւում է, թէ ինչպէս են պայքարում նրա ուսմանը:

—10